# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 հուլիսի 2013 թվականի N 303-Ա**

**ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՆՈՐ ԳԵՂԻԻ N 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 59-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի հունվարի 22-ի N 9-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. 2013 թվականի հուլիսի 15-ից 17-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նոր Գեղիի N 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում ֆինանսական աուդիտ իրականացնելու նպատակով ստեղծել աուդիտի առաջադրանքի աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) Կոմիտաս Հունանյան - խմբի ղեկավար, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ,

2) Անահիտ Ստեփանյան – անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ,

3) Արամ Գրիգորյան– անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ:

2. Աուդիտորական խմբին՝ աուդիտորական առաջադրանքը իրականացնել 2010-2012 թվականների համար ներկայացված ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության և դրանց ստանդարտների կիրառելի հիմունքներին համապատասխանության, կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերին ներկայացվող պահանջների պահպանման և միավորի հաշվեկշռում գտնվող գույքի /տարածքի/ վարձավճարների հաշվարկման և գանձման գործընթացների գնահատման նպատակով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ